ՀԱՎԵԼՎԱԾ 3

«Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու վերաբերյալ» պայմանագրի

Պայմաններ եւ անցումային դրույթներ

I. Հայաստանի Հանրապետությունից Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի անդամ նշանակելու հետ կապված հարցեր

1. Հայաստանի Հանրապետությունից առաջին անգամ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի անդամ նշանակված անդամներն իրենց գործառույթներն իրականացնում են մինչեւ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագիրն ուժի մեջ մտնելը՝ Բելառուսի Հանրապետությունից, Ղազախստանի Հանրապետությունից եւ Ռուսաստանի Դաշնությունից նշանակված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի անդամների լիազորությունների ժամկետի ավարտը, ինչպես սահմանված է «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 99-րդ հոդվածի 3-րդ կետի 4-րդ պարբերությամբ:

Սույն կետի առաջին պարբերությամբ նշված ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունը Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայում ներկայացված է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի երեք անդամով, որոնք ունեն ձայնի մեկ իրավունք եւ որոնց իրավասության ոլորտներն ամրագրված չեն:

II. Ներմուծման մաքսատուրքերի (այլ համարժեք տուրքերի, հարկերի ու գանձումների) եւ հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարների հաշվեգրման ու բաշխման հետ կապված հարցեր

2. Հայաստանի Հանրապետությունը «Ներմուծման մաքսատուրքերի (այլ համարժեք տուրքերի, հարկերի ու գանձումների) գումարների հաշվեգրման եւ բաշխման, դրանք անդամ պետությունների բյուջե փոխանցելու կարգի մասին» արձանագրությունը («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 5-րդ հավելված), ինչպես նաեւ «Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվեգրման եւ բաշխման մասին» կանոնակարգը (2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 8-րդ հավելվածի հավելված) կիրառում է ««Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին Հայաստանի Հանրապետության միանալու վերաբերյալ» պայմանագիրն (այսուհետ՝ Պայմանագիր) ուժի մեջ մտնելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

III. Մաքսային իրավահարաբերություններին առնչվող հարցեր

Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող եւ այլ անձանց մասով

3. Մինչեւ Պայմանագիրն ուժի մեջ մտնելը՝ Հայաստանի Հանրապետությունում ստեղծված՝ մաքսային միջնորդները (բրոքերները), մաքսային փոխադրողները, մաքսային պահեստներում պահպանություն իրականացնող անձինք, անմաքս առեւտրի խանութներ հիմնադրող անձինք Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից ճանաչվում են, համապատասխանաբար, որպես մաքսային ներկայացուցիչներ, մաքսային փոխադրողներ, մաքսային պահեստներ ու անմաքս առեւտրի խանութներ տիրապետողներ եւ մաքսային գործի բնագավառում, մինչեւ Պայմանագիրն ուժի մեջ

մտնելը, ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմաններով գործունեություն իրականացնելու իրավունք՝

մաքսային միջնորդները (բրոքերները), մաքսային պահեստներում պահպանություն իրականացնող անձինք եւ անմաքս առեւտրի խանութներ հիմնադրող անձինք՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից 18 ամսվա ընթացքում.

մաքսային փոխադրողները՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից 6 ամսվա ընթացքում:

Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից Հայաստանի Հանրապետությունում ստեղծվում են մաքսային ներկայացուցիչներ, մաքսային փոխադրողներ, մաքսային պահեստներ, ժամանակավոր պահպանման պահեստներ տիրապետողներ, լիազորված տնտեսական օպերատորներ եւ ունեն 2009 «Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագրի (այսուհետ՝ Մաքսային միության մաքսային օրենսգիրք) անբաժանելի մաս կազմող՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքով, մաքսային իրավահարաբերությունները կարգավորող միջազգային այլ պայմանագրերով եւ Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող այլ ակտերով սահմանված պայմաններով մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնելու իրավունք՝ առանց՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքի 13-րդ հոդվածի 3-րդ ենթակետով, 19-րդ հոդվածի 2-րդ ենթակետով, 39-րդ հոդվածի 1-ին ենթակետով նախատեսված մաքսատուրքերի, հարկերի վճարման երաշխիքների տրամադրման եւ (կամ) առանց Մաքսային միության մաքսային օրենսգրքի 13-րդ հոդվածի 2-րդ ենթակետով, 24-րդ հոդվածի 2-րդ ենթակետով, 29-րդ հոդվածի 2-րդ ենթակետով նախատեսված՝ իր քաղաքացիական պատասխանատվության համար ռիսկի ապահովագրման պայմանագրի տրամադրման՝

մաքսային ներկայացուցիչները, մաքսային պահեստներ եւ ժամանակավոր պահպանման պահեստներ տիրապետողները՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից 18 ամսվա ընթացքում.

մաքսային փոխադրողները եւ լիազորված տնտեսական օպերատորները՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից 6 ամսվա ընթացքում:

4. Մինչեւ Պայմանագիրն ուժի մեջ մտնելը՝ Հայաստանի Հանրապետությունում ստեղծված մաքսային փոխադրողները Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքով մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների փոխադրում իրականացնելու իրավունք ունեն Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից 6 ամսվա ընթացքում Մաքսային միության մաքսային օրենսգրքով, մաքսային իրավահարաբերությունները կարգավորող՝ Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող միջազգային այլ պայմանագրերով եւ այլ ակտերով սահմանված դեպքերում եւ պայմաններով իրենց՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքի 18-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան կարգավիճակը չհաստատելու, ինչպես նաեւ մաքսային փոխադրողներին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից կազմավորվող մաքսային փոխադրողների ընդհանուր ռեեստրում գրանցելու մասին տեղեկությունները եւ որպես մաքսային փոխադրող գործունեություն իրականացնելու իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը ներկայացնելու պայմանով:

Մինչեւ Պայմանագիրն ուժի մեջ մտնելը՝ Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինները մաքսային փոխադրողների ընդհանուր ռեեստր ձեւավորելու նպատակով Եվրասիական տնտեսական հանձնաժողով են ներկայացնում Հայաստանի Հանրապետությունում ստեղծված մաքսային փոխադրողների ռեեստրները:

5. Մաքսատուրքերի, հարկերի վճարման երաշխիքների տրամադրման, ինչպես նաեւ մաքսային ներկայացուցիչների, մաքսային փոխադրողների, ժամանակավոր պահպանման պահեստների, մաքսային պահեստների ռեեստրներում իրավաբանական անձանց գրանցելու եւ իրավաբանական անձանց լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակ տալու համար պայման հանդիսացող՝ քաղաքացիական պատասխանատվության համար ռիսկի ապահովագրման պայմանագրի առկայության

մասով Մաքսային միության մաքսային օրենսգրքի 13-րդ, 19-րդ, 24-րդ, 29-րդ եւ 39-րդ հոդվածների դրույթները Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ են մտնում՝

Մաքսային միության մաքսային օրենսգրքի 13-րդ, 24-րդ եւ 29-րդ հոդվածների դրույթները՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից 18 ամսվա ընթացքում.

Մաքսային միության մաքսային օրենսգրքի 19-րդ եւ 39-րդ հոդվածների դրույթները՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից 6 ամսվա ընթացքում:

Մաքսային ձեւակերպումների իրականացման առանձնահատկությունների մասով

6. Հայաստանի Հանրապետությունում մաքսային հսկողության ներքո գտնվող եւ մինչեւ Պայմանագիրն ուժի մեջ մտնելը մաքսային մարմինների պատասխանատու պահպանության հանձնված ապրանքները Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից համարվում են ժամանակավոր պահպանության հանձնված ապրանքներ, եւ այդ ապրանքների նկատմամբ կիրառվում են Մաքսային միության մաքսային օրենսգրքի, մաքսային իրավահարաբերությունները կարգավորող՝ Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող միջազգային այլ պայմանագրերի եւ այլ ակտերի դրույթները՝ հաշվի առնելով սույն Հավելվածի 7-րդ կետը:

7. Սույն Հավելվածի 6-րդ կետում նշված ապրանքների ժամանակավոր պահպանության ժամկետը հաշվարկվում է Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից:

8. Հայաստանի Հանրապետությունում մաքսային հսկողության ներքո գտնվող եւ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ մաքսային մարմինների պատասխանատու պահպանության հանձնված ապրանքների վերաբերյալ մաքսային հայտարարագիրը պետք է ներկայացվի մաքսային մարմին մինչեւ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից հաշվարկվող՝ ժամանակավոր պահպանության ժամկետի ավարտը:

9. Այն ապրանքները, որոնց վերաբերյալ Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինը՝ մինչեւ Պայմանագիրն ուժի մեջ մտնելը, ընդունել է մաքսային հայտարարագիր, ենթակա են հայտարարված մաքսային ռեժիմով ձեւակերպման այն կարգով եւ պայմաններով, որոնք սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ մաքսային մարմնի կողմից մաքսային հայտարարագիրն ընդունելու օրը:

Մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների փոխադրման առանձնահատկությունների մասով

10. Այն ապրանքների համար, որոնց վերաբերյալ Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինը՝ մինչեւ Պայմանագիրն ուժի մեջ մտնելը, ընդունել է տարանցիկ փոխադրման հայտարարագիր ծառայող փոխադրման ամփոփագրեր, մաքսային տարանցման թույլտվությունը տրամադրվում, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքով մաքսային հսկողության ներքո փոխադրումն իրականացվում եւ ավարտվում է այն կարգով ու պայմաններով, որոնք սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ՝ մաքսային մարմնի կողմից նշված փոխադրման ամփոփագրերն ընդունելու օրը:

11. Հայաստանի Հանրապետության տարածքով մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների փոխադրումը, որոնց համար Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինը՝ մինչեւ Պայմանագիրն ուժի մեջ մտնելը, տրամադրել է մաքսային տարանցման թույլտվություն, իրականացվում եւ ավարտվում է այն կարգով ու պայմաններով, որոնք սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ մաքսային տարանցման թույլտվության տրամադրման օրը:

Ապրանքների կարգավիճակի եւ մաքսային ընթացակարգերի մասով

12. Հայաստանի Հանրապետությունում գտնվող եւ մինչեւ Պայմանագիրն ուժի մեջ մտնելը «ներմուծում՝ ազատ շրջանառության համար», «վերաներմուծում» եւ «սեփականության իրավունքի հրաժարում՝ հօգուտ պետության» մաքսային ռեժիմներով ձեւակերպված ապրանքները Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից համարվում են, համապատասխանաբար, «ներքին սպառման համար բացթողում», «վերաներմուծում» եւ «հրաժարում՝ հօգուտ պետության» մաքսային ընթացակարգերով ձեւակերպված ապրանքներ եւ ճանաչվում են որպես Եվրասիական տնտեսական միության ապրանքներ: Այդ ապրանքների նկատմամբ կիրառվում են Մաքսային միության մաքսային օրենսգրքի, մաքսային իրավահարաբերությունները կարգավորող՝ Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող միջազգային այլ պայմանագրերի եւ այլ ակտերի դրույթները:

13. Երրորդ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածք ներս բերված եւ Պայմանագիրն ստորագրելուց հետո «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» կամ «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված՝ Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ) 8702, 8703 եւ 8704 ապրանքային դիրքերում դասակարգվող մարդատար ավտոմեքենաները եւ շարժիչով այլ տրանսպորտային միջոցներ, որոնց համար վճարվել է ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8702, 8703 եւ 8704 ապրանքային դիրքերում դասակարգվող մարդատար ավտոմեքենաների եւ շարժիչով այլ տրանսպորտային միջոցների համար Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնով (ԵԱՏՄ ՄՄՍ) սահմանված դրույքաչափերից տարբեր մաքսատուրք, Բելառուսի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում համարվում են օտարերկրյա ապրանքներ՝

մինչեւ վճարված մաքսատուրքերի ու ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8702, 8703 եւ 8704 ապրանքային դիրքերում դասակարգվող մարդատար ավտոմեքենաների ու շարժիչով

այլ տրանսպորտային միջոցների համար ԵԱՏՄ ՄՄՍ–ի սահմանած դրույքաչափերով վճարման ենթակա մաքսատուրքերի գումարների տարբերության չափով մաքսատուրքերի վճարումը.

մինչեւ Հայաստանի Հանրապետության կողմից ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8702, 8703, 8704 ապրանքային դիրքերում դասակարգվող մարդատար ավտոմեքենաների եւ շարժիչով այլ տրանսպորտային միջոցների համար ԵԱՏՄ ՄՄՍ–ի սահմանած դրույքաչափերի կիրառման գործընթացն սկսելուց հետո 3 տարին լրանալը:

Սույն կետի գործողությունը չի տարածվում սույն կետի առաջին պարբերության մեջ նշված ապրանքների վրա, որոնց համար մաքսատուրքերը վճարված են ԵԱՏՄ ՄՄՍ-ի սահմանած դրույքաչափերով:

14. Մինչեւ Պայմանագիրն ուժի մեջ մտնելը՝ Հայաստանի Հանրապետությունում «արտահանում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ձեւակերպված ապրանքները Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից ճանաչվում են որպես «արտահանում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներ, եւ դրանց նկատմամբ կիրառվում են Մաքսային միության մաքսային օրենսգրքի, մաքսային իրավահարաբերությունները կարգավորող՝ Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող միջազգային այլ պայմանագրերի եւ այլ ակտերի դրույթները:

15. Մինչեւ Պայմանագիրն ուժի մեջ մտնելը՝ Հայաստանի Հանրապետությունում «ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» եւ «ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմներով ձեւակերպված ապրանքները Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից ճանաչվում են, համապատասխանաբար, որպես «մաքսային տարածքում վերամշակում» եւ «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգերով ձեւակերպված ապրանքներ: Նշված ապրանքների, ինչպես նաեւ մինչեւ Պայմանագիրն ուժի մեջ մտնելը՝ նման ապրանքների վերամշակման գործողությունների արդյունքում ստացված ապրանքների նկատմամբ կիրառվում են Մաքսային միության մաքսային օրենսգրքի, մաքսային իրավահարաբերությունները կարգավորող՝ Եվրասիական տնտեսական

միության իրավունքի մաս կազմող միջազգային այլ պայմանագրերի եւ այլ ակտերի դրույթները՝ հաշվի առնելով սույն Հավելվածի 16-20-րդ կետերը:

16. Սույն Հավելվածի 15-րդ կետում նշված մաքսային ընթացակարգերը գործում են մինչեւ ապրանքները համապատասխան մաքսային ռեժիմներով ձեւակերպելու ժամանակ սահմանված ժամկետների լրանալը՝ հաշվի առնելով Մաքսային միության մաքսային օրենսգրքի համապատասխանաբար 243-րդ եւ 256-րդ հոդվածներով նախատեսված ժամկետների սահմաններում ապրանքների վերամշակման ժամկետները երկարաձգելու հնարավորությունը:

17. Մինչեւ Պայմանագիրն ուժի մեջ մտնելը՝ Հայաստանի Հանրապետության տարածքից Մաքսային միության անդամ պետություններից մեկի տարածք արտահանված ապրանքների նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում կիրառվող «ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմը դադարում է գործել Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից: Նշված մաքսային ռեժիմով ձեւակերպված ապրանքները, ինչպես նաեւ նման ապրանքների վերամշակման գործողությունների արդյունքում ստացված ապրանքները Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից ճանաչվում են որպես Եվրասիական տնտեսական միության ապրանքներ:

18. Մաքսային միության անդամ պետությունների տարածքից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված՝ Մաքսային միության ապրանքների նկատմամբ՝ մինչեւ Պայմանագիրն ուժի մեջ մտնելը, Մաքսային միության անդամ պետություններում կիրառվող «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգը դադարում է գործել Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից: Նշված մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքները, ինչպես նաեւ նման ապրանքների վերամշակման գործողությունների արդյունքում ստացված ապրանքները Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից ճանաչվում են որպես Եվրասիական տնտեսական միության ապրանքներ:

19. Մաքսային միության անդամ պետությունների տարածքից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված ապրանքների նկատմամբ՝ մինչեւ Պայմանագիրն ուժի մեջ մտնելը, Հայաստանի Հանրապետությունում կիրառվող «ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմը դադարում է գործել Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից: Նշված մաքսային ռեժիմով ձեւակերպված ապրանքները, ինչպես նաեւ նման ապրանքների վերամշակման գործողությունների արդյունքում ստացված ապրանքները, Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից ճանաչվում են որպես Եվրասիական տնտեսական միության ապրանքներ:

20. Մաքսային միության անդամ պետություններից մեկի տարածք վերամշակման նպատակով ապրանքների հետագա արտահանման դեպքում երրորդ երկրների տարածքից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված ապրանքների նկատմամբ՝ մինչեւ Պայմանագիրն ուժի մեջ մտնելը, Հայաստանի Հանրապետությունում կիրառվող «ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմը դադարում է գործել առանց այդպիսի ապրանքները եւ նման ապրանքների վերամշակման գործողությունների արդյունքում ստացված ապրանքները Մաքսային միության մաքսային օրենսգրքի մաքսային ընթացակարգերով ձեւակերպելու՝ պայմանով, որ «ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմով ձեւակերպված ապրանքների վերամշակման արդյունքում ստացված արտադրանքը՝ մինչեւ ապրանքների վերամշակման ժամկետը լրանալը, բայց ոչ ուշ, քան 2016 թվականի հունվարի 1-ը՝ «Անկախ պետությունների համագործակցությունում ապրանքների ծագման երկրի որոշման կանոնների մասին» 2009 թվականի նոյեմբերի 20–ի համաձայնագրով սահմանված բավարար վերամշակման չափանիշներին համապատասխան ճանաչվեն որպես Հայաստանի Հանրապետությունից ծագող ապրանքներ: Ընդ որում, «ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմով ձեւակերպված ապրանքները, եւ նման ապրանքների վերամշակման գործողությունների արդյունքում ստացված ապրանքները ճանաչվում են որպես Եվրասիական տնտեսական տարածքի ապրանքներ:

21. Մաքսային միության անդամ պետություններում Հայաստանի Հանրապետության տարածքից ներմուծված ապրանքների նկատմամբ՝ մինչեւ Պայմանագիրն ուժի մեջ մտնելը կիրառվող «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգը դադարում է գործել Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից: Նշված մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքները, ինչպես նաեւ նման ապրանքների վերամշակման գործողությունների արդյունքում ստացված ապրանքները Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից ճանաչվում են որպես Եվրասիական տնտեսական միության ապրանքներ:

22. Հայաստանի Հանրապետությունում՝ մինչեւ Պայմանագիրն ուժի մեջ մտնելը, «ներմուծում մաքսային պահեստ» կամ «ներմուծում ազատ մաքսային պահեստ» մաքսային ռեժիմով ձեւակերպված ապրանքները Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից ճանաչվում են որպես «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներ՝ բացառությամբ «արտահանում» մաքսային ընթացակարգի համաձայն դուրսհանման համար նախատեսված ապրանքների, եւ նշված ապրանքների նկատմամբ կիրառվում են Մաքսային միության մաքսային օրենսգրքի, մաքսային իրավահարաբերությունները կարգավորող՝ Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող միջազգային այլ պայմանագրերի եւ այլ ակտերի դրույթները՝ հաշվի առնելով սույն Հավելվածի 23-րդ կետը:

23. Հայաստանի Հանրապետության տարածքից «արտահանում» մաքսային ընթացակարգի համաձայն՝ դուրսհանման համար նախատեսված եւ, մինչեւ Պայմանագիրն ուժի մեջ մտնելը, «ներմուծում մաքսային պահեստ» կամ «ներմուծում ազատ մաքսային պահեստ» մաքսային ռեժիմով ձեւակերպված ապրանքները պահպանվում են մաքսային պահեստներում՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից 6 ամսվա ընթացքում:

«Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգը գործում է մինչեւ ապրանքները «մաքսային պահեստ» մաքսային ռեժիմով ձեւակերպելու ժամանակ սահմանված՝ պահպանման ժամկետների լրանալը՝ հաշվի առնելով Մաքսային միության մաքսային

օրենսգրքի 231-րդ հոդվածով սահմանված ժամկետների սահմաններում դրանք երկարաձգելու հնարավորությունը:

24. Այն ապրանքները, որոնք Հայաստանի Հանրապետությունում մինչեւ Պայմանագիրն ուժի մեջ մտնելը ձեւակերպված են եղել «ժամանակավոր ներմուծում» եւ «ժամանակավոր արտահանում» մաքսային ռեժիմներով, Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից ճանաչվում են, համապատասխանաբար, որպես «ժամանակավոր արտահանում» եւ «ժամանակավոր ներմուծում (ընդունում)» մաքսային ընթացակարգերով ձեւակերպված ապրանքներ: Այդ ապրանքների նկատմամբ կիրառվում են Մաքսային միության մաքսային օրենսգրքի, մաքսային իրավահարաբերությունները կարգավորող՝ Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող միջազգային այլ պայմանագրերի եւ այլ ակտերի դրույթները՝ հաշվի առնելով սույն կետի երկրորդ եւ երրորդ պարբերությունները:

Մինչեւ Պայմանագիրն ուժի մեջ մտնելը՝ «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ձեւակերպված ապրանքների նկատմամբ կիրառվում է մաքսատուրքերի, հարկերի վճարումից լրիվ պայմանական ազատում:

«Ժամանակավոր ներմուծում (ընդունում)» մաքսային ընթացակարգը գործում է մինչեւ ապրանքները «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ձեւակերպելու ժամանակ սահմանված՝ ժամանակավոր ներմուծման ժամկետների լրանալը՝ հաշվի առնելով Մաքսային միության մաքսային օրենսգրքի 280-րդ հոդվածով նախատեսված ժամկետների սահմաններում դրանք երկարաձգելու հնարավորությունը:

«Ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգը գործում է մինչեւ ապրանքները «ժամանակավոր արտահանում» մաքսային ռեժիմով ձեւակերպելու ժամանակ սահմանված՝ ժամանակավոր արտահանման ժամկետների լրանալը՝ հաշվի առնելով Մաքսային միության մաքսային օրենսգրքի 288-րդ հոդվածի համաձայն դրանք երկարաձգելու հնարավորությունը:

Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո «ժամանակավոր ներմուծում (ընդունում)» կամ «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգերի գործողությունը դադարում է այն ապրանքների նկատմամբ, որոնք, մինչեւ Պայմանագիրն ուժի մեջ մտնելը, ներմուծվել են Հայաստանի Հանրապետություն Մաքսային միության անդամ պետություններից եւ (դուրս են հանվել) Մաքսային միության անդամ պետություններ Հայաստանի Հանրապետությունից, եւ այդպիսի ապրանքները ձեռք են բերում Եվրասիական տնտեսական միության ապրանքների կարգավիճակ:

25. Հայաստանի Հանրապետությունում մինչեւ Պայմանագիրն ուժի մեջ մտնելը՝ «վերաարտահանում» մաքսային ռեժիմով ձեւակերպված ապրանքները Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից ճանաչվում են որպես «վերաարտահանում» մաքսային ռեժիմով ձեւակերպված ապրանքներ: Այդ ապրանքների նկատմամբ կիրառվում են Մաքսային միության մաքսային օրենսգրքի, մաքսային իրավահարաբերությունները կարգավորող՝ Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող միջազգային այլ պայմանագրերի եւ այլ ակտերի դրույթները:

Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից այն ապրանքները, որոնք, «ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմի համաձայն, ապրանքների վերամշակման գործողությունների իրականացման արդյունքում ստացված՝ վերամշակումից հետո ստացվող արդյունքների արտահանման նպատակով Հայաստանի Հանրապետությունում, մինչեւ Պայմանագիրն ուժի մեջ մտնելը, ձեւակերպված են եղել «վերաարտահանում» մաքսային ռեժիմով, ճանաչվում են որպես «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներ:

26. Այն ապրանքները, որոնք Հայաստանի Հանրապետությունում, մինչեւ Պայմանագիրն ուժի մեջ մտնելը, ձեւակերպված են եղել «ոչնչացում» եւ «ներմուծում անմաքս առեւտրի խանութ» մաքսային ռեժիմներով, Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից ճանաչվում են, համապատասխանաբար, որպես «ոչնչացում» եւ «անմաքս առեւտուր» մաքսային ընթացակարգերով ձեւակերպված ապրանքներ: Այդ ապրանքների նկատմամբ կիրառվում են Մաքսային միության մաքսային օրենսգրքի,

մաքսային իրավահարաբերությունները կարգավորող՝ Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող միջազգային այլ պայմանագրերի եւ այլ ակտերի դրույթները՝ հաշվի առնելով սույն Հավելվածի 27-րդ կետով նախատեսված դրույթները:

27. Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո Եվրասիական տնտեսական միության այլ անդամ պետություններ, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետություն մեկնող օդանավերի ուղեւորները, իրենց նստեցման կտրոնները ներկայացնելուց հետո, կարող են Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված անմաքս առեւտրի խանութներից ձեռք բերել՝

«անմաքս առեւտուր» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներ՝ հետագայում անմաքս առեւտրի խանութ տիրապետողի կողմից ներմուծման մաքսատուրք վճարելու եւ այն բաշխելու պայմանով,

«անմաքս առեւտուր» մաքսային ընթացակարգով ձեւակերպված Եվրասիական տնտեսական միության ապրանքներ:

Հայաստանի Հանրապետությունը պարտավորություն է ստանձնում՝ բացառելու «անմաքս առեւտուր» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ալկոհոլային խմիչքների ու գարեջրի, ծխախոտի ու ծխախոտային արտադրատեսակների իրացումն այնպիսի քանակով, որը գերազանցում է այն ապրանքների տեղափոխման նորմերը, որոնք ազատված են մաքսային իրավահարաբերությունները կարգավորող՝ Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող ակտերով սահմանված մաքսային վճարների կատարումից:

Հայաստանի Հանրապետության տարածքում հիմնադրված անմաքս առեւտրի խանութներից Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետություն մեկնող օդանավերի ուղեւորներին Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո վաճառված օտարերկրյա ապրանքները դրանց իրացումից ոչ ուշ, քան 10 օրացուցային օրերի ընթացքում ենթակա են Հայաստանի Հանրապետությունում «ներքին սպառման համար բացթողում» մաքսային

ընթացակարգով ձեւակերպման՝ առանց ակցիզային հարկի եւ ավելացված արժեքի հարկի վճարման (ազատվելով վճարումից):

Սույն կետի 1-5-րդ պարբերությունների դրույթները կիրառվում են մինչեւ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքում համանման դրույթների ամրագրումը:

Հայաստանի Հանրապետության տարածքում հիմնադրված անմաքս առեւտրի խանութներից Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետություն մեկնող օդանավերի ուղեւորներին վաճառված Եվրասիական տնտեսական միության ապրանքների նկատմամբ «անմաքս առեւտուր» մաքսային ընթացակարգն ավարտվում է մաքսային մարմին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ձեւով հաշվետվություն ներկայացնելուց հետո:

Տրանսպորտային միջոցների հետ կապված մաքսային ձեւակերպումների իրականացման առանձնահատկությունների մասով

28. Հայաստանի Հանրապետության տարածք՝ մինչեւ Պայմանագիրն ուժի մեջ մտնելը, ներմուծված տրանսպորտային միջոցները, ուղեւորների եւ ապրանքների միջազգային փոխադրումներ իրականացնելիս, ինչպես նաեւ Եվրասիական տնտեսական միության մյուս անդամ պետությունում կամ Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող պետությունում գրանցված տրանսպորտային միջոցները Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից ճանաչվում են որպես միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցներ: Այդ տրանսպորտային միջոցների նկատմամբ կիրառվում են Մաքսային միության մաքսային օրենսգրքի 48-րդ գլխի, մաքսային իրավահարաբերությունները կարգավորող՝ Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող միջազգային այլ պայմանագրերի եւ ակտերի դրույթները:

29. Մինչեւ սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելը՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված եւ Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանված տրանսպորտային միջոցները, ուղեւորների եւ ապրանքների միջազգային փոխադրումներ իրականացնելիս, սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից ճանաչվում են որպես միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցներ: Այդ տրանսպորտային միջոցների նկատմամբ կիրառվում են Մաքսային միության մաքսային օրենսգրքի 48-րդ գլխի, մաքսային իրավահարաբերությունները կարգավորող՝ Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող միջազգային այլ պայմանագրերի եւ ակտերի դրույթները:

Անձնական օգտագործման ավտոմեքենաների կարգավիճակին առնչվող մասով

30. «Մաքսային միության մաքսային սահմանով ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման նպատակով ապրանքների տեղափոխման եւ դրանց բացթողման հետ կապված մաքսային գործառնություններ իրականացնելու կարգի մասին» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 5-րդ հավելվածով սահմանված մաքսատուրքերի, հարկերի դրույքաչափերը Հայաստանի Հանրապետությունում չեն կիրառվում ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8702, 8703, 8704 21 եւ 8704 31 ապրանքային դիրքերում դասակարգվող՝ անձնական օգտագործման նպատակով ֆիզիկական անձանց կողմից ներմուծվող մարդատար ավտոմեքենաների եւ շարժիչով այլ տրանսպորտային միջոցների (այսուհետ՝ ավտոմեքենաներ) համար՝ մինչեւ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8702, 8703, 8704 21 եւ 8704 31 ապրանքային դիրքերում դասակարգվող մարդատար ավտոմեքենաների եւ շարժիչով այլ տրանսպորտային միջոցների համար ԵԱՏՄ ՄՄՍ-ով սահմանված դրույքաչափերի՝ Հայաստանի Հանրապետության կողմից կիրառումը սկսելը:

Մինչեւ ավտոմեքենաների համար Համաձայնագրի 5-րդ հավելվածով սահմանված մաքսատուրքերի, հարկերի դրույքաչափերի՝ Հայաստանի Հանրապետության կողմից

կիրառումը սկսելը, ավտոմեքենաների համար մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

31. Պայմանագրի ստորագրումից հետո երրորդ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված ավտոմեքենաները, որոնց համար մաքսատուրքերը, հարկերը վճարվել են Համաձայնագրի 5-րդ հավելվածով սահմանված դրույքաչափերից տարբերվող դրույքաչափերով, ինչպես նաեւ սույն Հավելվածի 30-րդ կետում նշված ավտոմեքենաները Եվրասիական տնտեսական միության այլ անդամ պետություններում ճանաչվում են օտարերկրյա ապրանքներ՝

մինչեւ Համաձայնագրի 5-րդ հավելվածում նշված դրույքաչափերով վճարման ենթակա մաքսատուրքերի, հարկերի գումարների եւ վճարված մաքսատուրքերի, հարկերի գումարների տարբերության չափով մաքսատուրքերի, հարկերի վճարումը,

մինչեւ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8702, 8703, 8704 21 եւ 8704 31 ապրանքային դիրքերում դասակարգվող մարդատար ավտոմեքենաների եւ շարժիչով այլ տրանսպորտային միջոցների համար ԵԱՏՄ ՄՄՍ-ով սահմանված դրույքաչափերի՝ Հայաստանի Հանրապետության կողմից կիրառման մեկնարկին հաջորդող 3 տարին լրանալը:

Սույն կետի գործողությունը չի տարածվում Պայմանագրի ստորագրումից հետո ներմուծված ավտոմեքենաների վրա, որոնց համար մաքսատուրքերը վճարվել են ԵԱՏՄ ՄՄՍ-ով սահմանված դրույքաչափերով:

32. Պայմանագրի ստորագրումից հետո Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված ավտոմեքենաների համար՝ Եվրասիական տնտեսական միության այլ անդամ պետությունների տարածքներ դրանց ներմուծման դեպքում, վճարված մաքսատուրքերի, հարկերի գումարների եւ Համաձայնագրի 5-րդ հավելվածում նշված դրույքաչափերով վճարման ենթակա մաքսատուրքերի, հարկերի գումարների տարբերությունը կարող է Հայաստանի Հանրապետության բյուջե վճարվել մինչեւ Եվրասիական տնտեսական միության նման այլ անդամ պետությունների տարածքներ ներմուծումը:

33. Սույն Հավելվածի 30-րդ եւ 31-րդ կետերում նշված ավտոմեքենաների համար՝ Եվրասիական տնտեսական միության այլ անդամ պետությունների տարածքներ դրանց

ներմուծման դեպքում, իրականացվում է մաքսային հսկողություն, իսկ մաքսային վճարների վճարման անհրաժեշտության դեպքում կատարվում են Մաքսային միության մաքսային օրենսգրքով, Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող՝ մաքսային իրավահարաբերությունները կարգավորող այլ միջազգային պայմանագրերով եւ այլ ակտերով սահմանված մաքսային գործառնություններ՝ հաշվի առնելով սույն Հավելվածի 34-րդ եւ 35-րդ կետերը:

34. Այն դեպքում, երբ սույն Հավելվածի 30-րդ եւ 31-րդ կետերում նշված ավտոմեքենաների համար մաքսատուրքերը, հարկերը սույն Հավելվածի 31-րդ կետի երկրորդ պարբերությունում նշված չափով Հայաստանի Հանրապետության բյուջե չեն վճարվել մինչեւ Եվրասիական տնտեսական միության այլ անդամ պետությունների տարածքներ ներմուծվելը, ապա նման ավտոմեքենաների մաքսային հայտարարագրման դեպքում այդ մաքսատուրքերը, հարկերը վճարվում են Եվրասիական տնտեսական միության այն անդամ պետության բյուջե, որի մաքսային մարմնի գործունեության տարածքում է գտնվում Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման վայրը, ուր ժամանել են այդ ավտոմեքենաները:

35. Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված՝ սույն Հավելվածի 30-րդ եւ 31-րդ կետերում նշված ավտոմեքենաները կարող են Եվրասիական տնտեսական միության այլ անդամ պետությունների տարածքներ ժամանակավոր ներմուծվել միայն Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող անձանց կողմից առանց մաքսատուրքերի, հարկերի վճարման եւ առանց մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովում տրամադրելու: Եվրասիական տնտեսական միության այլ անդամ պետությունների տարածքներ նման ավտոմեքենաների ներմուծումն ու օգտագործումն այլ անձանց կողմից, ինչպես նաեւ Եվրասիական տնտեսական միության նման այլ անդամ պետությունների տարածքներում դրանց օտարումը, օգտագործման փոխանցումը, տնօրինումը թույլատրվում է միայն այդ այլ պետությունների մաքսային մարմիններում դրանց մաքսային հայտարարագրման եւ մաքսատուրքերի, հարկերի վճարման պայմանով՝ հաշվի առնելով սույն Հավելվածի 31-րդ կետը:

36. Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինները Եվրասիական տնտեսական միության այլ անդամ պետությունների մաքսային մարմիններին տեղեկացնում են Պայմանագրի ստորագրումից հետո ներմուծված եւ Հայաստանի Հանրապետության տարածքում ազատ շրջանառության համար բաց թողնված ավտոմեքենաների եւ այդ ավտոմեքենաների համար վճարված մաքսատուրքերի, հարկերի գումարների չափի մասին:

37. Հայաստանի Հանրապետության տարածք մինչեւ Պայմանագրի ստորագրումը ներմուծված ավտոմեքենաները, բացառությամբ սույն Հավելվածի 30-րդ եւ 31-րդ կետերում նշվածների, Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից համարվում են Եվրասիական տնտեսական միության ապրանքներ:

ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8702, 8703, 8704 21 եւ 8704 31 ապրանքային դիրքերում դասակարգվող մարդատար ավտոմեքենաների եւ շարժիչով այլ տրանսպորտային միջոցների համար ԵԱՏՄ ՄՄՍ-ով սահմանված դրույքաչափերի՝ Հայաստանի Հանրապետության կողմից կիրառման մեկնարկին հաջորդող երեք (3) տարին լրանալուց հետո սույն հավելվածի 30-րդ եւ 31-րդ կետերում նշված ավտոմեքենաները ճանաչվում են Եվրասիական տնտեսական միության ապրանքներ անկախ վճարված մաքսատուրքերի, հարկերի գումարների եւ Համաձայնագրի 5-րդ հավելվածում նշված դրույքաչափերով վճարման ենթակա մաքսատուրքերի, հարկերի գումարների տարբերության չափով մաքսատուրքերի, հարկերի Եվրասիական տնտեսական միության այլ անդամ պետության բյուջե վճարման փաստից:

IV. Առեւտրի համաշխարհային կազմակերպությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության հետ կապված հարցեր

38. Հայաստանի Հանրապետության՝ Եվրասիական տնտեսական միությանը միանալու առնչությամբ Առեւտրի համաշխարհային կազմակերպության անդամների հետ բանակցություններ են անցկացվում Հայաստանի Հանրապետության համապատասխան սակագնային պարտավորությունների փոփոխման վերաբերյալ՝

Առեւտրի համաշխարհային կազմակերպության կանոններին, ինչպես նաեւ «Բազմակողմ առեւտրային համակարգի շրջանակներում Մաքսային միության գործունեության մասին» 2011 թվականի մայիսի 19-ի պայմանագրի 1-ին հոդվածի 4-րդ կետին համապատասխան:

Նշված բանակցություններն անցկացվում են դրա համար լիազորված պատվիրակության կողմից հրահանգների հիման վրա: Պատվիրակության կազմը եւ հրահանգները հաստատվում եւ, անհրաժեշտության դեպքում, ճշգրտվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի կողմից:

Բանակցությունների արդյունքում ձեռք բերված պայմանավորվածությունները՝ մինչեւ Առեւտրի համաշխարհային կազմակերպությունում դրանց վերջնական ընդունումը, հավանություն են ստանում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի կողմից:

Նշված պայմանավորվածություններին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական միության Միասնական մաքսային սակագնում կատարվում են համապատասխան փոփոխություններ:

39. Հայաստանի Հանրապետության՝ Առեւտրի համաշխարհային կազմակերպությանն անդամակցության Աշխատանքային խմբի զեկույցում ընդգրկված Հայաստանի Հանրապետության պարտավորությունները չեն տարածվում Եվրասիական տնտեսական միության մյուս անդամ պետությունների վրա:

V. Մաքսասակագնային կարգավորման հարցեր

40. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից ԵԱՏՄ ՄՄՍ տուրքերի դրույքաչափերից տարբերվող ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերը Հայաստանի Հանրապետության կողմից անցումային շրջանի ընթացքում կիրառվում են Պայմանագրի 4-րդ հավելվածով նախատեսված ցանկին համապատասխան ապրանքների համար:

Հայաստանի Հանրապետությունը կապահովի, որ այն ապրանքները, որոնց համար ԵԱՏՄ ՄՄՍ մաքսատուրքերի դրույքաչափերի համեմատ կիրառվում են ներմուծման մաքսատուրքերի առավել ցածր դրույքաչափեր, օգտագործվեն միայն իր տարածքի սահմաններում եւ միջոցներ կձեռնարկի Եվրասիական տնտեսական միության այլ անդամ պետությունների տարածքներ նման ապրանքների արտահանումը չթույլատրելու համար առանց ԵԱՏՄ ՄՄՍ դրույքաչափերով հաշվարկված ներմուծման մաքսատուրքերի գումարների եւ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծման ժամանակ վճարված ներմուծման մաքսատուրքերի գումարների տարբերության վճարման:

Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը եւ Ռուսաստանի Դաշնությունը իրավունք ունեն որոշելու նշված ապրանքների՝ իրենց տարածք ժամանելու կարգը:

Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից Եվրասիական տնտեսական հանձնաժողովն է իրականացնում այն ապրանքների եւ դրույքաչափերի Ցանկի վարումը՝ ներառյալ թարմացումը, որոնց հանդեպ Հայաստանի Հանրապետության կողմից անցումային շրջանում կիրառվում են Եվրասիական տնտեսական միության Միասնական մաքսային սակագնի դրույքաչափերից տարբերվող ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափեր:

41. Հայաստանի Հանրապետության կողմից տրամադրված ներմուծման մաքսատուրքերի վճարման արտոնությունները կիրառվում են՝

1) մինչեւ 2015 թվականի հունվարի 1-ը կնքված Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի շրջանակներում (այդ թվում՝ այդ միջազգային պայմանագրերի շրջանակներում իրականացվող ծրագրերի՝ 2015 թվականի հունվարի 1-ից հետո իրագործման դեպքում)՝ նշված միջազգային պայմանագրերին համապատասխան.

2) «Հայ-հնդկական տեղեկատվական եւ հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ուսումնական կենտրոն» ծրագրի իրականացման շրջանակներում՝ մինչեւ դրա

գործողության ժամկետի ավարտը, Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Հնդկաստանի Հանրապետության կառավարության միջեւ «Հայ-հնդկական տեղեկատվական եւ հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ուսումնական կենտրոն հիմնելու մասին» 2009 թվականի հունիսի 26-ի փոխըմբռնման հուշագրին համապատասխան.

3) Հայաստանի Հանրապետության 2013 թվականի հունիսի 19-ի օրենքով հաստատված «Դիլիջանի միջազգային դպրոց» ծրագրի իրականացման շրջանակներում՝ մինչեւ 2018 թվականի հունվարի 1-ը, բացառությամբ տրանսպորտային միջոցների, հեծանիվների, ջրային եւ օդային տրանսպորտի:

42. 2015-2025 թվականների ժամանակահատվածում թույլատրվում է ներմուծման մաքսատուրքերի գանձումից ազատմամբ ներմուծել ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 1701 13 եւ 1701 14 ենթադիրքերում ընդգրկված եղեգնաշաքարի հումքը (այսուհետ սույն կետում՝ շաքարի հումք) Հայաստանի Հանրապետության տարածքում արդյունաբերական վերամշակման համար:

Հայաստանի Հանրապետության տարածքում արդյունաբերական վերամշակման համար շաքարի հումք ներմուծելու պայման է հանդիսանում Հայաստանի Հանրապետության տարածքում շաքար վերամշակող ձեռնարկություններին ապահովելու նպատակով ներմուծվող շաքարի հումքի նպատակային նշանակության մասին Հայաստանի Հանրապետության լիազոր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան տրված հաստատման առկայությունը:

Հայաստանի Հանրապետությունը Եվրասիական տնտեսական հանձնաժողովին տեղեկացնում է արդյունաբերական վերամշակման համար շաքարի հումքի ներմուծման տարեկան ծավալների մասին՝ Հայաստանի Հանրապետությունում շաքարի արտադրության եւ սպառման՝ առաջիկա ժամանակահատվածի համար ձեւավորվող հաշվեկշռին համապատասխան:

Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է, որ արդյունաբերական վերամշակման համար ներմուծվող շաքարի հումքը, ինչպես նաեւ սույն կետի առաջին պարբերությունում նշված դրույքաչափային արտոնությունների կիրառմամբ ներմուծվող շաքարի հումքից արտադրված սպիտակ շաքարը, չեն վերաուղարկվի Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության տարածքներ:

Սույն կետի դրույթները հիմք չեն հանդիսանում Բելառուսի Հանրապետությունից, Ղազախստանի Հանրապետությունից եւ Ռուսաստանի Դաշնությունից շաքարի ներմուծման նկատմամբ Հայաստանի Հանրապետության կողմից սահմանափակող միջոցների կիրառման համար:

43. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից 2 տարվա ընթացքում թույլատրվում է ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 1701 99 100 1 եւ 1701 99 100 9 ստորաենթադիրքերում ընդգրկված սպիտակ շաքարի ներմուծումը մաքսային արժեքի 10 տոկոսի չափով ներմուծման մաքսատուրքի վճարմամբ՝ տարեկան 4000 տոննայից ոչ ավելի ծավալով:

Սպիտակ շաքարի ներմուծման պայման է հանդիսանում Հայաստանի Հանրապետության լիազորված մարմնի կողմից տրվող ներմուծման լիցենզիան:

44. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից ներմուծման մաքսատուրքերից ազատվում են՝

1) ռազմական նշանակության արտադրանք հանդիսացող ապրանքները, որոնց ներմուծումը Հայաստանի Հանրապետություն 2015-2022 թվականների ընթացքում իրականացվում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարիքների ապահովման համար եւ որոնց անալոգները չեն արտադրվում Եվրասիական տնտեսական միության այլ անդամ պետությունների տարածքներում:

Ներմուծման պայման է հանդիսանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից տրված վերջնական օգտագործողի հավաստագիրը.

2) միջազգային փոխադրումների եւ (կամ) Հայաստանի Հանրապետության տարածքով եւ (կամ) Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տարածքների միջեւ ներքին փոխադրումների համար օգտագործման նպատակներով Հայաստանի Հանրապետություն մինչեւ 2022 թվականի դեկտեմբերի 31-ը ներմուծվող քաղաքացիական ուղղաթիռներ. ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8802 11 000 1 ստորաենթադիրքում ընդգրկվող քաղաքացիական ուղղաթիռները՝ 750 կգ-ից ավելի, բայց 3175 կգ-ից ոչ ավելի առավելագույն վերթիռային զանգվածով, ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8802 12 000 1 ստորաենթադիրքում ընդգրկվող քաղաքացիական ուղղաթիռները՝ 2000 կգ-ից ավելի, բայց 5000 կգ-ից ոչ ավելի հանդերձված դատարկ ապարատի զանգվածով եւ 4000 կգ-ից ավելի, բայց 10500 կգ-ից ոչ ավելի առավելագույն վերթիռային զանգվածով, ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8802 20 000 1 ստորաենթադիրքում ընդգրկվող քաղաքացիական մարդատար ինքնաթիռները՝ 2000 կգ-ից ոչ ավելի հանդերձված դատարկ ապարատի զանգվածով եւ 750 կգ-ից ավելի առավելագույն վերթիռային զանգվածով, ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8802 40 003 9 ստորաենթադիրքում ընդգրկվող ինքնաթիռները՝ 60000 կգ-ից ավելի, բայց 90000 կգ-ից ոչ ավելի հանդերձված դատարկ ապարատի զանգվածով, 120 000 կգ-ից ավելի, բայց 180 000 կգ-ից ոչ ավելի առավելագույն վերթիռային զանգվածով՝ քաղաքացիական, բեռնատար միջնամայրուղային, ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8802 40 009 7 ստորաենթադիրքում ընդգրկվող ինքնաթիռները՝ 160 000 կգ-ից ավելի հանդերձված դատարկ ապարատի զանգվածով, քաղաքացիական բեռնատար լայնաֆյուզելաժային, հեռամայրուղային՝ 370 000 կգ-ից ոչ ավելի առավելագույն վերթիռային զանգվածով.

ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8802 40 003 5 եւ 8802 40 003 6 ստորաենթադիրքերի քաղաքացիական ուղեւորատար ինքնաթիռները՝ արտադրման երկրի լիազոր մարմնի կողմից տրված տեսակի հավաստագրին համապատասխան որոշվող՝ ոչ պակաս քան 110 մարդու, բայց ոչ ավելի քան 300 մարդու համար ուղեւորատեղեր ունեցող՝ մինչեւ 2016 թվականի դեկտեմբերի 31-ը Հայաստանի Հանրապետություն ներմուծվող, ինչպես նաեւ օդանավերի թռիչքային պիտանիության պահպանման համար պատասխանատու իրավասու մարմնի կողմից հաստատված՝ ուղեւորների տեղավորման սխեմային (LOPA)

համապատասխան որոշվող՝ ոչ պակաս քան 110 մարդու, բայց ոչ ավելի քան 300 մարդու համար ուղեւորատեղ ունեցող, Հայաստանի Հանրապետության տարածքով եւ (կամ) Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տարածքների միջեւ միջազգային փոխադրումների եւ (կամ) ներքին փոխադրումների համար օգտագործման նպատակով 2017 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2019 թվականի հունիսի 30-ը Հայաստանի Հանրապետություն ներմուծվող.

ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8802 40 003 5 եւ 8802 40 003 6 ստորաենթադիրքերի քաղաքացիական ուղեւորատար ինքնաթիռները, որոնք Հայաստանի Հանրապետություն են ներմուծվել սույն կետի հինգերորդ պարբերությունում նշված արտոնության կիրառմամբ եւ դրանց շահագործման ժամկետի ընթացքում Հայաստանի Հանրապետություն են ներմուծվում Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքի սահմաններից դուրս դրանց վերանորոգումից կամ տեխնիկական սպասարկումից հետո.

3) այն ապրանքները, որոնք Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք են ներմուծվում Հայաստանի Հանրապետության տարածքում ատոմային էլեկտրակայանի շինարարության եւ արդիականացման ու երաշխիքային ժամկետում շահագործման նպատակներով՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի մարտի 19-ի թիվ 9 որոշմամբ հաստատված՝ երաշխիքային ժամկետի ընթացքում ատոմային էլեկտրակայանի շինարարության եւ դրա շահագործման նպատակներով Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների ցանկին համապատասխան:

45. Հայաստանի Հանրապետությունը կապահովի 41-րդ, 43-րդ եւ 44-րդ կետերում նշված սակագնային արտոնությունների կիրառմամբ ներմուծված ապրանքների օգտագործումը միայն իր տարածքի սահմաններում եւ քայլեր կձեռնարկի Եվրասիական տնտեսական միության այլ անդամ պետությունների տարածքներ նման ապրանքների արտահանումը չթույլատրելու համար՝ առանց ԵԱՏՄ ՄՄՍ դրույքաչափերով հաշվարկված ներմուծման մաքսատուրքերի գումարների եւ

Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծման ժամանակ վճարված ներմուծման մաքսատուրքերի գումարների տարբերության վճարման:

46. ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի փոփոխության դեպքում սույն Հավելվածում եւ Պայմանագրի 4-րդ հավելվածում նշված ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրերը կարող են ճշտվել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից:

VI. Երրորդ երկրների նկատմամբ հատուկ պաշտպանական, հակագնագցման եւ փոխհատուցման միջոցների կիրառման հարցեր

47. Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում հատուկ պաշտպանական, հակագնագցման եւ փոխհատուցման միջոցների կիրառմանը նախորդող քննության անցկացման համար պատասխանատու մարմնի կողմից սեփական նախաձեռնությամբ կամ շահագրգիռ անձի դիմումի հիման վրա «Երրորդ երկրների նկատմամբ հատուկ պաշտպանական, հակագնագցման եւ փոխհատուցման միջոցներ կիրառելու մասին» արձանագրությանը համապատասխան («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 8-րդ հավելված) կարող է վերաքննություն իրականացվել Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվի դրությամբ Եվրասիական տնտեսական միությունում գործող հատուկ պաշտպանական, հակագնագցման եւ փոխհատուցման միջոցների առնչությամբ:

Նման վերաքննություն սկսելու մասին որոշում կարող է կայացվել միայն բավարար ապացույցների առկայության դեպքում այն մասին, որ քննությունն անցկացնելիս՝ որի արդյունքներով որոշում է կայացվել գործող հատուկ պաշտպանական, հակագնագցման կամ փոխհատուցման միջոցը կիրառելու մասին, Հայաստանի Հանրապետության շուկայի տվյալները հաշվի առնելը կբերեր համապատասխան միջոցի սահմանման հիմքերի էական փոփոխության:

Սույն կետի առաջին պարբերությունում նշված վերաքննության նկատմամբ չեն կիրառվում «Երրորդ երկրների նկատմամբ հատուկ պաշտպանական, հակագնագցման

եւ փոխհատուցման միջոցներ կիրառելու մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 8-րդ հավելված) 35-րդ, 110-րդ եւ 175-րդ կետերի դրույթները, որոնցով նվազագույն ժամկետ է սահմանվում, որի լրանալուց հետո կարող է սկսվել հատուկ պաշտպանական, հակագնագցման կամ փոխհատուցման վերաքննություն:

Հատուկ պաշտպանական, հակագնագցման եւ փոխհատուցման միջոցներ կիրառելու մասին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումները, որոնք ընդունվել են Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահի դրությամբ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում անցկացվող քննությունների արդյունքներով, ենթակա են Հայաստանի Հանրապետության տարածքում անմիջական կիրառման եւ կարող են վերանայվել սույն կետի առաջինից-երրորդ պարբերություններում նշված կարգով:

Որպես հատուկ պաշտպանական միջոցներ սահմանված ներմուծման քվոտաների չափերը Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից ենթակա են ճշգրտման՝ հաշվի առնելով երրորդ երկրներից Հայաստանի Հանրապետություն 2011-2013 թվականների ժամանակահատվածում համապատասխան ապրանքների ներմուծման ծավալները:

VII. Տեխնիկական կանոնակարգման հարցեր

48. «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 53-րդ հոդվածի 3-րդ կետի առաջին պարբերության դրույթները Հայաստանի Հանրապետության կողմից կիրառվում են Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից 12 ամիս հետո, բացառությամբ Մաքսային միության հետեւյալ տեխնիկական կանոնակարգերի, որոնց համար սահմանվում են նշված դրույթներն ուժի մեջ մտնելու հետեւյալ ժամկետները.

24 ամիս հետո՝

«Մեքենաների եւ սարքավորումների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 010/2011).

«Կահույքագործական արտադրանքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 025/2012).

«Գյուղատնտեսական եւ անտառատնտեսական տրակտորների եւ դրանց կցորդների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 031/2012).

48 ամիս հետո՝

«Ավտոմոբիլային ճանապարհների անվտանգություն» (ՄՄ ՏԿ 014/2011).

60 ամիս հետո՝

«Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 018/2011):

Հայաստանի Հանրապետությունում Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի դրույթների հետ միասին թույլատրվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության նորմերի կիրառությունը՝

Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից 12 ամսվա ընթացքում՝ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի տեխնիկական կանոնակարգման օբյեկտների նկատմամբ (բացառությամբ «Մեքենաների եւ սարքավորումների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 010/2011), «Ավտոմոբիլային ճանապարհների անվտանգություն» (ՄՄ ՏԿ 014/2011), «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 018/2011), «Կահույքագործական արտադրանքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 025/2012), «Գյուղատնտեսական եւ անտառատնտեսական տրակտորների եւ դրանց կցորդների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 031/2012) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի),

Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից 24 ամսվա ընթացքում՝ «Մեքենաների եւ սարքավորումների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 010/2011), «Կահույքագործական արտադրանքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 025/2012), «Գյուղատնտեսական եւ անտառատնտեսական տրակտորների եւ դրանց կցորդների

անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 031/2012) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի տեխնիկական կանոնակարգման օբյեկտների նկատմամբ,

Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից 48 ամսվա ընթացքում՝ «Ավտոմոբիլային ճանապարհների անվտանգություն» (ՄՄ ՏԿ 014/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի տեխնիկական կանոնակարգման օբյեկտների նկատմամբ,

Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից 60 ամսվա ընթացքում՝ «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 018/2011) Մաքսային Միության տեխնիկական կանոնակարգի տեխնիկական կանոնակարգման օբյեկտների նկատմամբ:

49. Մաքսային միության՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվի դրությամբ ուժի մեջ մտած տեխնիկական կանոնակարգերը Հայաստանի Հանրապետությունում գործողության մեջ դնելու կարգը սահմանվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից՝ հաշվի առնելով այն, որ Մաքսային միության այդ տեխնիկական կանոնակարգերի անցումային դրույթների՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշմամբ ավելի վաղ սահմանված ժամկետները երկարաձգվում են 6-ից մինչեւ 24 ամիս ժամկետով:

50. «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տեխնիկական կանոնակարգման մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 9-րդ հավելված) 7-րդ կետին համապատասխան ձեւավորվող արտադրանքի միասնական ցանկում ընդգրկված արտադրանքի համար՝ մինչեւ համապատասխան տեխնիկական կանոնակարգերն ուժի մեջ մտնելը, գործում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները:

51. Սույն Հավելվածի 48-50-րդ կետերի դրույթները տարածվում են Հայաստանի Հանրապետության տարածքում շրջանառության համար նախատեսված արտադրանքի վրա:

52. Տեխնիկական կանոնակարգման օբյեկտների համապատասխանության գնահատումը՝ Եվրասիական տնտեսական միության (Մաքսային միության) տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխան, իրականացնում են համապատասխանության գնահատման մարմինները, որոնք հավատարմագրվել են «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 54-րդ հոդվածով նախատեսված կարգով եւ պայմաններով:

Տեխնիկական կանոնակարգման օբյեկտների գրանցումը (պետական գրանցումը)՝ Եվրասիական տնտեսական միության (Մաքսային միության) տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխան, իրականացնում են նշված աշխատանքների կատարման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան լիազորված մարմինները:

VIII. Սանիտարական, անասնաբուժասանիտարական եւ կարանտինային բուսասանիտարական միջոցներ կիրառելու հետ կապված հարցեր

53. Եվրասիական տնտեսական միության (Մաքսային միության) միասնական սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջների կամ տեխնիկական կանոնակարգերի պահանջների հետ արտադրանքի (ապրանքների) համապատասխանության պետական գրանցումը իրականացվում է բնակչության սանիտարահամաճարակաբանական բարեկեցության բնագավառում Հայաստանի Հանրապետության լիազոր մարմինների կողմից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

54. Հայաստանի Հանրապետությունում ծախսերի ֆինանսավորումը, որոնք կապված են աուդիտների, համատեղ ստուգումների (տեսչական ստուգումների)

անցկացման հետ, իրականացվում է համապատասխան բյուջեների միջոցների կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող այլ միջոցների հաշվին, եթե այլ կարգ չի համաձայնեցվում յուրաքանչյուր կոնկրետ դեպքում:

IX. Սպառողների իրավունքների պաշտպանության հետ կապված հարցեր

55. Հայաստանի Հանրապետությունում «անորակ ապրանքներ» հասկացությունը նշանակում է ապրանքներ, որոնք չեն համապատասխանում անվտանգության ընդունված ստանդարտներին եւ նորմերին:

X. Ծառայությունների առեւտրի, հիմնադրման, գործունեության եւ ներդրումների իրականացման կարգավորման հարցեր

56. «Ծառայությունների առեւտրի, հիմնադրման, գործունեության եւ ներդրումների իրականացման մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 16-րդ հավելված) 15-17-րդ, 23-րդ, 26-րդ, 28-րդ, 31-րդ, 33-րդ եւ 35-րդ կետերով նախատեսված սահմանափակումները, բացառումները, հավելյալ պահանջները եւ պայմանները (բացառությամբ հորիզոնականներից) կիրառվում են Հայաստանի Հանրապետության համար սահմանափակումների, բացառումների, հավելյալ պահանջների եւ պայմանների անհատական ազգային ցանկը Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի կողմից նշված Արձանագրության 2-րդ կետի չորրորդ պարբերությանը համապատասխան հաստատվելու ամսաթվից:

57. Հայաստանի Հանրապետության համար սահմանափակումների, բացառումների, հավելյալ պահանջների եւ պայմաններ անհատական ազգային ցանկը հաստատվում է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի կողմից՝ «Ծառայությունների առեւտրի, հիմնադրման, գործունեության եւ ներդրումների

իրականացման մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 16-րդ հավելված) 2-րդ կետի չորրորդ պարբերությանը համապատասխան, Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից 3 ամսից ոչ ուշ:

58. Ծառայությունների ոլորտների ցանկը, որոնցում գործում է «Ծառայությունների առեւտրի, հիմնադրման, գործունեության եւ ներդրումների իրականացման մասին» արձանագրության 40-րդ կետով նախատեսված ծառայությունների միասնական շուկան, հաստատվում է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի կողմից Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից 3 ամսից ոչ ուշ:

59. Ծառայությունների ոլորտների (ենթաոլորտների) ցանկը, որոնցով ծառայությունների միասնական շուկայի ձեւավորումը կիրականացվի ազատականացման պլաններին համապատասխան (անցումային շրջանի ընթացքում), հաստատվում է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի կողմից Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից 3 ամսից ոչ ուշ:

XI. Անուղղակի հարկերի գանձման հետ կապված հարցեր

60. Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տարածքից ներմուծված (ներմուծվող) եւ 2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ չեզրափակված մաքսային ընթացակարգերով, ռեժիմներով եւ գործառնություններով՝ Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությանը համապատասխան ձեւակերպված ապրանքների համար անուղղակի հարկերի գանձումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների կողմից:

Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության հարկային մարմինների միջեւ էլեկտրոնային ձեւով տեղեկատվության փոխանակման հարցերը փոխադարձ առեւտրի իրականացման դեպքում կկարգավորվեն «Անուղղակի հարկերի վճարված գումարների

մասին Մաքսային միության անդամ պետությունների հարկային մարմինների միջեւ էլեկտրոնային ձեւով տեղեկատվության փոխանակման մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրությունում փոփոխություններ կատարելու մասին արձանագրության ընդունման միջոցով, որը ուժի մեջ կմտնի Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից ոչ ուշ:

61. Փոխադարձ առեւտրում այն ապրանքների մասով, որոնց համար մինչեւ 2015 թվականի հունվարի 1-ը Հայաստանի Հանրապետության մաքսային մարմնում իրականացվել է նախնական հայտարարագրում, եւ հայտարարագրողի կողմից վճարվել են անուղղակի հարկերը, 2015 թվականի հունվարի 1-ից հետո բեռնված այդպիսի ապրանքներ արտահանողի կողմից՝ ԱԱՀ զրոյական դրույքաչափի կիրառման հիմնավորվածությունը եւ (կամ) ակցիզների վճարումից ազատումը հաստատելու համար, «Ապրանքների արտահանման եւ ներմուծման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման դեպքում անուղղակի հարկերի գանձման կարգի եւ դրանց վճարման նկատմամբ հսկողության մեխանիզմի մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 18-րդ հավելված) 4-րդ կետով նախատեսված փաստաթղթերի փաթեթում ապրանքների ներմուծման եւ անուղղակի հարկերի վճարման հայտարարության փոխարեն հարկային մարմին է ներկայացվում ապրանքներն ազատ շրջանառության բացթողման ժամանակ ձեւակերպված մաքսային հայտարարագրի պատճենը:

XII. Բնական մենաշնորհի ոլորտի կարգավորման հարցեր

62. «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի XIX բաժնի դրույթները տարածվում են «Բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորման միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 20-րդ հավելված) 1-ին հավելվածում նշված

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջեւ առեւտրի վրա ազդեցություն ունեցող բնական մենաշնորհի ոլորտներում Հայաստանի Հանրապետության բնական մենաշնորհի սուբյեկտների, սպառողների, գործադիր իշխանության մարմինների, պետական մարմինների եւ տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցությամբ հարաբերությունների վրա:

63. Հայաստանի Հանրապետության տարածքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հանրային ծառայությունները «Բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորման միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 20-րդ հավելված) 1-ին եւ 2-րդ հավելվածներին համապատասխան հավասարեցվում են բնական մենաշնորհի ծառայություններին: Նշված հանրային ծառայությունների նկատմամբ Հայաստանի Հանրապետությունը կիրառում է «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի դրույթները, որոնցով կարգավորվում են բնական մենաշնորհի ծառայությունները:

XIII. Էներգետիկայի ոլորտի կարգավորման հարցեր

64. Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի XX բաժնի դրույթները Հայաստանի Հանրապետության կողմից կիրառվում են նշված Պայմանագրում՝ անդամ պետությունների միջեւ էլեկտրական էներգիայի (հզորության) միջպետական հաղորդման իրականացման մեթոդաբանությանը վերաբերող մասով փոփոխություններ կատարելու մասին արձանագրությանը համապատասխան, որն ուժի կմտնի Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից 1 տարուց ոչ ուշ:

XIV. Մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պահպանության եւ պաշտպանության հարցեր

65. «Մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պահպանության եւ պաշտպանության մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 26-րդ հավելված) V բաժնի դրույթները Հայաստանի Հանրապետության կողմից կիրառվում են Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից 3 տարին լրանալուց հետո:

66. Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է երրորդ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված եւ Մաքսային միության անդամ պետությունների մտավոր սեփականության օբյեկտների միասնական մաքսային գրանցամատյանում եւ ապրանքների նշանակման երկրի մտավոր սեփականության օբյեկտների մաքսային գրանցամատյանում ներառված ապրանքային նշաններով տարբերանշված ապրանքների՝ առանց իրավատիրոջ համաձայնության Հայաստանի Հանրապետության տարածքից Եվրասիական տնտեսական միության այլ անդամ պետությունների տարածք արտահանումը թույլ չտալու ուղղությամբ միջոցների ձեռնարկումը:

67. Հայաստանի Հանրապետությունը ոչ ուշ, քան Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից կմշակի եւ կհաստատի Մաքսային միության անդամ պետությունների մտավոր սեփականության օբյեկտների միասնական մաքսային գրանցամատյանում եւ ապրանքների նշանակման երկրի մտավոր սեփականության օբյեկտների մաքսային գրանցամատյանում ներառված ապրանքային նշաններով տարբերանշված ապրանքների արտահանման նկատմամբ հսկողության կարգ սահմանող նորմատիվ իրավական ակտ:

68. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից 6 ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունը կմշակի եւ կհաստատի միջոցառումների պլան ուղղված՝ Հայաստանի Հանրապետությունում ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի սպառման տարածաշրջանային սկզբունքի գործողության

պայմաններում գործունեություն իրականացնելու համար տնտեսավարող սուբյեկտների ադապտացմանը:

69. Հայաստանի Հանրապետությունն ապահովում է սույն Հավելվածի 66-րդ կետով նախատեսված պարտավորության կատարման մոնիթորինգի իրականացումը եւ Հայաստանի Հանրապետության ու Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջեւ ապրանքաշրջանառության ծավալների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության ծագման ապրանքների վերաբերյալ վիճակագրական տվյալները Եվրասիական տնտեսական հանձնաժողով ներկայացնելը ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ:

Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը եւ Ռուսաստանի Դաշնությունն իրավունք ունեն նախաձեռնելու Հայաստանի Հանրապետության համար սույն Հավելվածի 65-րդ կետով նախատեսված անցումային շրջանը վաղաժամ չեղյալ համարելու մասով Պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ ընթացակարգ, եթե Հայաստանի Հանրապետությունից Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության տարածք տարեկան արտահանման կառուցվածքում երրորդ երկրներում արտադրված ապրանքների մասնաբաժինը գերազանցում է 15 տոկոսը: